

դիւների պակասութիւնը, հարկան հողատէր-իւ-
խանները արօտատեղերում ամառ ժամանակ ի-
րանց հօտերն արածացնող հովիւներէն ծածուկ
կերպով հասցնելով վնասները խեղճ դանձաղինե-
րին մի անկանելի դիրքի մէջ են դնում: Աստի-
կանութիւնն անգամ այդ կիսավայրերի, աւաղակա-
լարայ հովիւներէ չարագործութիւններէ առաջը
չէ կարողանում աւանդ: Գեւեւ ևս անցնելով աշնանը,
երբ նրանք իրանց անխիւ հօտերը լցնելով դան-
ձաղիններէ չը հնձած արտերը (և այդ երկուքը
ամեն տարի է պատահում), ոչնչացրին կատարե-
կապէս այդ արտերը, Ախալքալաքի գաւառական
կառավարութեան թարգմանի կազմած արձանա-
գրութեան համաձայն 1025 բուրլու վնաս հաս-
ցրին դանձաղիններին: Շրջակայ գիւղացիները
սարսափով են նայում այդ հովիւներէ վրա: Հա-
տարակութեան իրաւունքը այդ ստանկիս անող,
ոչխարատէրերի և նրանց «թիւից փախած» հո-
վիւներէ ձեռքից ներքն ընկած՝ դանձաղինները ան-
ցեղաւ տարի մի աղբորայրով դիմեցին թիֆլիսի
պ. նահանգապետին, ինչդրեւի, որ կարգադրու-
թիւն անի այդ մարդկանց դպելու: Նահանգա-
պետն էլ հրամանագրեց Ախալքալաքի գաւառա-
պետին, որ սա օրինաւոր օժանդակութիւն ցոյց
տայ դանձաղիններին: Կարելի էր խտտապէս հրա-
մանագրել Ստիլիսի շինական հասարակու-
թեանը (որ բաղկանում է 8 գիւղերից, որոնց
թիւում է և Գանձա գիւղը), որպէս զի ստիլիսի
ձիւտը պահապաններին (разъездная стража)
ամենայն ուշադրութեամբ հսկել վրացի և թուրք
ոչխարատէրերի և նրանց աւաղակ հովիւներէ ա-
րարքներէ վրա: Այդ ձիւտը պահապանները, ո-
րոնց թիւն է 7 հոգի յիշեալ գիւղական հասարա-
կութեան մէջ և որոնք ամառվայ 4 ամիսներում
ստանում են հասարակութիւնից 433 բուրլի, որ
և բաժանվում է այդ 7 հոգու վրա, կարող կը
լինեն հսկել աւաղակութիւններէ վրա և այդ
տեսակ դրոժ հասարակութիւնը իրաւունք ունի
պահանջել նրանցից: Համարձակութեամբ ենք դարձ-
նել այս կենսական խնդրի վրա մեր գաւառապե-
տի լուրջ ուշադրութիւնը, որից անմիջապէս կախ-
ված է մեր գաւառացիների հանգստութիւնը և
բարօրութիւնը:

ՆԵՐՏԻՆ ԼՈՒՐԵՐ

Յուլիսի 6-ին, Մանդիլիսում, կարճատև հիւան-
դութիւնից յետոյ վախճանվեցաւ տեղական «Но-
вое Общество» լրագրի խմբագիր, երրուեալ հա-
ւատարմատար Ալեքսանդր Վասիլիով: Ստեպա-
նով, 42 տարեկան հասակում: Ստեպանով լու-
յայտին էր ամբողջ թիֆլիսի և Կովկասի շատ
տեղերին թէ իբրև արժանաւոր իրաւաբան, և թէ
իբրև անկողնապահ պարբերական Սաքսոնով հա-
մախարանը իրաւաբանական գիտութիւնների կան-
դիդատի աստիճանով, և մի քանի տարիներ դատա-
բանական պաշտօններ վարելով Ռուսաստանում,
Ստեպանով 1869 թիւին եկաւ Կովկաս, և իր մեծ
ընդունակութիւնների շնորհով, 1870 թեականին,
դեռ ևս համարեա 25 տարեկան հասակում,
դարձաւ թիֆլիսի դատաստանական պալատի
անդամ: Բայց նա այդ պաշտօնում երկուր չը մը-
նաց, և 1873 թիւին հրաժարական տալով ստանձ-
նեց երրուեալ հաւատարմատարի պաշտօնը, որի
մէջ և մնաց մինչև իր մահը: 1884 թիւին Ստե-
պանով հիմնեց իր խմբագրութեամբ «Новое О-
бщество» լրագիրը: Նրա մահուանը թիֆլիսի
հասարակութիւնը զրկելիցաւ մի համակերպ մար-
դուց, և արժանաւոր հասարակական գործիչից:
Ստեպանովի վաղահաս մահը մի ծանր վիշտ է
նրա բազմաթիւ համակերպների և բաղմաթիւ
բարեկամների համար:

Լոյս տեսաւ հայերէն լեզուով «Չինուորագրա-
կան Կանոնադրութիւն» վերնագրով գիրքը, որը
կազմել է ի. Մալուխանց: Յայտնի է, որ ներ-
կայ 1887 թեականից Կովկասի ազգաբնակչութիւ-
նը ենթարկվում է զինուորական ծառայութեան:
Ինչպէս երևում է դանաւարկ կողմերից կեղծ տե-
ղեկութիւններից, զինուորագրութեան առիթով
տեղի են ունենում զանազան տարածացնութիւն-
ներ, անկանոնութիւններ և սխալմունքներ, և
այն էլ զվարարապէս այն պատճառով, որ ժո-
ղովրդը դեռ ևս չէ իմանում թէ ինքը ինչ ի-
րաւունքներ և պարտաւորութիւններ ունի այդ
գործում: Որպէս զի այդ բոլոր սխալմունքները և
տարածացնութիւնները առաջն առնելու, հարկաւոր
է որ ժողովրդը ճանաչի իր իրաւունքները և

պարտաւորութիւնները, ինչպէս շատ իրաւացի
կերպով նկատում է յիշեալ գրքի կազմող իր
յառաջաբանի մէջ, և հենց այդ տեսակետից նա-
յելով «Չինուորագրական Կանոնադրութեան» հա-
յերէն լեզուով լոյս տեսնելը ներկայումս միան-
գամայն նպատակաւոր մար պէտք է համարել:
Գիրքը յարմարեցրած է Կովկասի համար, և սլո-
ւանական է իր մէջ թէ «ընդհանուր զինուորա-
գրական կանոնադրութիւն» և թէ Կովկասի գի-
նուորագրութեան կանոնները: Վերջանուր կանո-
նադրութեան հարկաւոր տեղերում բերված են Կով-
կասեան զինուորագրական կանոնների համապա-
տասխան յօդուածները, այնպէս որ գիրքը մի
ամբողջ կանոնադրութիւն է ներկայացնում յառ-
կապէս Կովկասի համար: Անկասկած այդ գիրքը
մեծ օգնութիւն կարող է ցոյց տալ ժողովրդին,
հասկանալի լեզուով ծանօթացնելով նրան զին-
ուորագրութեան բոլոր մանրամասնութիւնների
հետ: Գրքի գինը Եփսոն է, այն է 30 կոպէկ, և
միանգամայն մատչելի ժողովրդի բոլոր դասա-
կարգերին:

Թիֆլիսում վերջին ժամանակները մեծ քանա-
կութեամբ կեղծ փողեր են երևացել, մասնաւոր
25-բուրլիանոց թղթադրամներ: Այդէն ձեռքա-
կալված են մի քանի հոգի, որոնք մեղադրվում
են կեղծ-փողեր գործածելու և տարածելու մէջ:

Յուլիսի 4-ին տեղի ունեցած երկրաշարժը,
ինչպէս երևում է տեղական լրագիրների հաղոր-
դած լուրերից, զրպի է եղել ոչ թէ միայն փո-
թիւում, Նովոսեմկայում, և Սև ծովի արեւելեան ա-
փերի զանազան կէտերում, այլ և Շարուպանի
գաւառի շատ տեղերում և մասամբ էլ Գորու
գաւառում:

Մեղ գրում են ԲԱՌՈՒՄՅՈՒՅ հետեւեալը: «Շատ
ժամանակ է արդէն, որ լուսն կը թէ ջրանցը
պիտի չլինի մեղանում և ջուրն անցկացնելու
համար երկաթի խողովակներ պիտի դարձվեն:
Ասում են որ այդ մասին հրաման է ստաց-
ված արդէն Գուրթալի նահանգական վարչու-
թեան մէջ, բայց դեռ պաշտօնապէս հաղորդված
չէ Բաթումի տեղական պոլիցեական կառավա-
րութեանը, որպէս զի սա հարկ եղած յարաբերու-
թիւններ սկսի ձեռնարկուել հետ: Երբ ջրանցը
չլինել կաշտով, և մեք կունենանք ջրի համար
հաստատուն ձանապարհ, այն ժամանակ միայն
բաթումից կաղաւթին օրամէջ պատահող ջրի
դակասութիւնից»:

Բուրլալու գաւառը յայտնի է Անդրկովկասում
որպէս մի գաւառ, որ հարուստ է այլ և այլ հան-
քերով. այդպիսի գտնվում են պղնձի, երկաթի
հանքեր, նոյն իսկ ուկու (թէ և խոտն ուրիշ մե-
տաղների հետ) և արծաթի հանքեր: Մէջը ա-
մառնի կոչված յունաց հին վանքից ոչ հեռու,
ինչպէս մեղ գրում է Զուլալիքի մեր թղթակիցը,
գտնվում է մի շատ հարուստ արծաթի հանք, որ
այժմ յանձն է առնում մշակելու մի Փրան-
սիական ընկերութիւն: Գեւ 1885 թիւին այդ
հանքից մի քանի նմուշներ ուղարկվեցան Ֆրան-
սիա ուսումնական հետազոտութիւններ և ներկա-
լեւում համար: Արծաթի որքան մեծ պրօցէնտ է
պարունակում իր մէջ այդ հանքը,—այդ դադա-
նի է պահում ընկերութիւնը:

Մեր ստորին ժողովրդի կանանց տղիւթիւնը
յայտնի է: Թէ որքան տղեւ և անհոգ են մեր
մայրերը և թէ ինչպէս են վարվում իրանց
մանուկները հետ, կարող է ցոյց տալ հետեւեալ
դէպքը, որի մասին մեղ հաղորդում են Կէրբէ-
ղից: Մի մայր զիջել ժամանակ քնաթաթակ ծիծ
է ստալիս օրօրոցում պառկած իր փոքրիկ մանու-
կին և նրա քունը տանելով, նա այդ զիջել մէջ
էլ մնում է ամբողջ զիջելը, անդիտակցաբար
խեղդելով իր մարմնի ծանրութեամբ օրօրոցում
պառկած մանուկին, որը չնպաստու է լինում:
Առաջուտեան դէմ մանուկին մուռած գտնելով
մայրը չէ խոտաւորվում իր սկսած յանցանքը,
որ առաջանում է վերին ստոմիճանի անհոգու-
թիւնից, այլ սովորով կերպով լաց լինելով հա-
ւատացնում է որ չար սատանան է խեղդել իր
մանուկին: Տղիւթիւնը, անհոգութիւն և սարսա-
փելի նախապաշարմունք,—սա մեր ռաբիկ ժո-
ղովրդին պատկանող կանանց յատկանիշը:

ԿՕՅՈՐԻՅ մեղ գրում են «Թէ և յուլիս ամիսն
է, բայց կըստեղծ դեռ ևս շատ հով է և կատա-

րեկապէս դարձանային: Յերեկները լուս է լինում,
բայց զիջելները նոյն իսկ ցուրտ է անում: Այս
տարի ամառանոց եկածների թիւը անցեալ տար-
վանից քիչ է»:

Թէ ԼԱՌԻՅ մեղ գրում են. «Յուլիսի 21-ին այս-
տեղի օրօրոցաց ուսումնարանի դահլիճում կա-
տարվեցաւ 1886—1887 ուսումնական տարվայ
ակտը, ներկայութեամբ ժողովրդի բաղմութեան:
Արժ. Նախագահը կարդաց ուսումնական հաշիւը,
որից երեւցաւ, որ աղպոյց ուսումնարանում եղել
են 63 աշակերտ, դեռեղված երկու դասարանում,
իսկ օրօրոցաց ուսումնարանում՝ 78 աշակերտ: Դի-
ղեւեղված նոյնպէս երկու դասարանում: Երկուե-
րորոցները ունեցել են երկու վարժուէի և երեք
ուսուցիչ: Իսկ եկել 1887—8 ուսումնական տար-
վայ համար դրանց թիւին կաւելանան դարձեալ
մէկ վարժուէի և մէկ ուսուցիչ: Աշակերտութեան
ձեռագործներից զոյացաւ 73 բուրլի 25 կոպէկ
արդիւնք»:

Այս օրերս թիֆլիսում լոյս տեսաւ «ОТЧЕТЫ
ПО БОРЬБѢ СЪ ФИЛОКСЕРОЙ НА КавказѢ ВЪ 1885
ГОДУ» վերնագրով գիրքը, որը պարունակում է
այն բոլոր հետազոտութիւնների և ձեռք առած
միջոցների համառօտ հաշիւը, որոնք գործ են
գրվել ֆիլոքսերայի առաջն առնելու համար
Ստիլիսի, Կուրանի, Ստալիսի և մի քանի
ուրիշ կողմերում: Այդ «հաշիւն» կցած է Կովկա-
սի մի փոքրիկ քարտէշը, որի վրա գտնվում նը-
շանակված են այն տեղերը, ուր մշակվում է խա-
ղող, այլ և այն տեղերը, որտեղ տարածվել է
ֆիլոքսերան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԿՕՐՈՒԳԻ ԽԵՍՆԵԼ

Ինչպէս յայտնի է, բուրլապական ազգային մեծ
ժողովը արդէն բուրլապական իշխան ընտրեց Կո-
րուգի պրինցին: Կորուգի պրինցը արդէն ըն-
դունեց բուրլապական պատգամաւորութիւնը, յայտ-
նեց իր չնորհալարվութիւնը այդ ընտրութեան հա-
մար, և մի քանի խօսքով յայտնեց իր կարծիքը
արտաքին քաղաքականութեան վերաբերութեամբ:
Կորուգի պրինցը դեռ Բուրլապ չէ եկել, մա-
նաւանդ որ նրա ընտրութեան վերաբերութեամբ
պետութիւնների մէջ տիրում է տարածացնութիւն,
և Ռուսաստանը իր կողմից ընդդէմ է այդ ընտ-
րութեան: Թէ ինչպէս կը վերջանայ Կորուգի
պրինցի հաստատութեան հարցը, այդ դժուար է
ասել, ուստի մի կողմ թողնելով ենթադրութիւն-
ները, բաւականանում ենք մի քանի կենսագրա-
կան տեղեկութիւններ հաղորդելով Կորուգի
պրինցի մասին, որի անունը արդէն կապելիցաւ
Բուրլապի պատմութեան հետ, և որը անկաս-
կած երկար ժամանակ քաղաքական ասպարիզից
չէ իջել:

Կորուգի Ֆերդինանդ պրինցը ծնվեց 1861
թիւին, փետրվարի 26-ին, Վիեննայում. նա այժմ
26 տարեկան է: Նա Ավստրիա Սաբոն-Կորուգի
որդն է, իսկ մօր կողմից, նա Ֆրանսիացի Լիւ-
դովիկա Ֆրիլայի թոռն է: Կորուգի պրինցը մայ-
րը՝ Մարիա Կլիմենտին Օրլեանի իշխանուհին է:
Կորուգի ընտանիքը ազգակցական մեծ է մօտիկ
կապեր ունի Եւրոպական մի քանի երկրների,
ինչպէս Աւստրիայի, Բելգիայի, Անգլիայի, Պոր-
տուգալի և Իտալիայի և մինչև իսկ Բարդի-
լիայի թագաւորող աների հետ: Կորուգի պրինցը
բաւական կը թւում երիտասարդ է. նա լուս ծանօթ
է Եւրոպական շատ նոր լեզուների և խօսում է
գերմաներէն, ֆրանսերէն, անգլերէն, իտալերէն
և ուրիշ մի քանի լեզուներով: Նա վերջին ժա-
մանակները առանձին ջանասիրութեամբ ուսում-
նալիւում էր վերջաւանութիւնը և սօցիալա-
կան-քաղաքական զանազան ծանրալիւս հարցեր.
Նա առանձնապէս սիրահար է բնական գիտու-
թիւններին: Կորուգի իշխանը ուշադրութեամբ
հետեւում է քաղաքական անցքերին, կարգաւոր
հետազոտութիւններ Եւրոպական զանազան երկր-
ների նշանաւոր լրագիրները: Իր զինուորական
կըթութիւնը պրինցը ստացել է աւստրիացի դե-
ներալների ղեկավարութեան ներքոյ: Կորուգի
հրաժը իր արտաքին տեղում իրաւամբ կարող է
համարվել Օրլեանների ներկայացուցիչ: Նա արծ-
աթեթի է, միջին հասակի, և յայտնի է, ինչպէս
հաստատ բնաւորութեան տէր երիտասարդ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լօնդոնի «Globe» լրագրի հաղորդած լուրը
դիմադրող գործածողների մասին, փոքր առ փոքր
ձշտվում է. քննութիւններից յայտնվել է, որ անգ-
լիական մի քանի քաղաքներում արդէն մեծ պառ-
կաստութիւններ են տեսնվել, և զինավարականե-
րը մտադիր են ոչ թէ միայն օդ բարձրացնելու
հասարակական շատ շինութիւններ, այլ և սպա-
նել զանազան քաղաքական ազդեցիկ գործիչներին:

—Գերմանական կիսապաշտօնական և մասամբ
պաշտօնական օրգանները այն միտքն են յայտ-
նում իրանց վերջին համարներում, որ Եւրոպայի
խաղաղութեանը առ այժմ ոչինչ վտանգ այլ ևս
չէ սպառնում: Այդ լրագիրները, իբրև ապացոյց,
մատնանիչ են անում ի միջի այլոց և այն բանի
վրա, որ կարգադրութիւն է եղել թոյլ տալ ձիւ-
ների արտահանութիւնը: Գերմանիայի օրինա-
կին է հետեւել այդ բանում և Աւստրիան, ինչ-
պէս հեռագիրը արդէն լուր բերեց: Գերմանական
կիսապաշտօնական լրագիրները չեն մոռանում
յիշել, որ խաղաղութեանը վտանգ չէ սպառնում
և այն պատճառով, որ իշխան Բիսմարկ ինքը
արդէն է կամենում, այն Բիսմարկը, որը անա-
ղին մեծամասնութիւն ունի իր կողմը իշխատա-
գում և որը հաստատել է տուել արդէն սեպտե-
նտի օրէնքը:

—Վիեննայի լրագիրները համակրութեամբ են
վերաբերվում դէպի Կորուգի պրինցի ընտրու-
թիւնը, օգտակէտ համարելով այդ բանը աւստ-
րիական քաղաքականութեան տեսակետից: «Pres-
se» լրագիրը այդ ընտրութեան առիթով գովա-
բանում է բուրլապական ազգային ժողովի ընթաց-
քը: Այդ մի և նոյն մտքերը յայտնելով «Neue
Freie Presse» լրագիրը աւելի վտանգաւոր ապա-
գայ է գուշակում Կորուգի պրինցի համար, որը
հենց առաջին քայլից, նոյն լրագրի կարծիքով, մեծ
զինադրութիւնների պէտք է հանդիպի:

—Ֆրանսիական զինուորական նոր օրինագծի
մէջ մի յօդուած կայ, որը առաջարկում է հարկ
վերցնել Ֆրանսիայում ապրող օտարահպատակնե-
րից, զինուորական ծառայութիւնը կատարելու
փոխարէն: Իշխան Բիսմարկի օրգանը կատաղի
կերպով յարձակվելով այդ խիստ զիտաւորութիւն-
ների վրա, առաջարկում է թէ գերմանական և
թէ միւս կառավարութիւններին հետեւել այդ օ-
րինակին, և հարկ վերցնել զանազան երկրիւնե-
րում ապրող ֆրանսիացիներէ:

—Շվեյցարիայից հաղորդում են, որ Յուգի լճի
ափին գտնվող փոքրիկ Յուգ քաղաքի մի մասը
յուլիսի 5-ին խորատու վնաս չէր մէջ: Այդ դժբաղ-
դութեան ենթարկվեցին լճի եղեղին զանազան
տները, որոնց թիւը 30-ի է հասնում, իսկ ջրի մէջ
անհետացած մարդոց թիւը կարծում են, որ հա-
րիւրից աւելի կը լինի:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՆԵՑ

ՊԵՏԵՐՈՒԳ, 6 յուլիսի ժողովրդական լուսա-
ւորութեան միջոցաւ կարգադրութեամբ, համա-
լսարաններում երիտասարդների ընդունելութիւնը
այս տարի ենթարկվում է մի քանի «սահմանա-
փակումներին: Այսպէս, Պետերբուրգի համալսա-
րանում կընդունվեն միայն նրանք, որոնք աւար-
տել են հասունութեան վկայականով Պետերբուրգի
չրջանի գիմնադիւններում, և որոնց վտանգելի լինե-
լը ապացուցված է վերոյիշեալ չրջանի գիմնադիւ-
նների վարչութեան կողմից, և այն կողմնակի ան-
ձինք, որոնք ստացել են հասունութեան վկայական-
ներ Պետերբուրգի չրջանի գիմնադիւններից, եթէ
սկզբում ուսում են առել այն նահանգների ուսում-
նարանական հիմնարկութիւններից մէկում, որոնք
մտցրված են այդ չրջանի մէջ, և կամ թէ մըշ-
տապէս ապրել են այդ նահանգներում Ռուս
չրջանի գիմնադիւնների աշակերտներից կընդուն-
վեն միայն նրանք, որոնք ծնունդ են առնում
ներքին գիմնադիւններում, որոնք ծնունդ են առնում
մօտ: Ռուսի համալսարաններից և նրանց հաւա-
տար ուսումնարանական հիմնարկութիւններից ու-
սանդիւնը կընդունվեն Պետերբուրգի համալսարա-
նում միայն ի յարգանս ընտանեկան առանձին
հանգամանքների, և միայն այն դէպքում, եթէ

ծնողները, ազգականները կամ դրանց փոխարինող փառանքի անձինքը, առանձին ստորագրութիւն տալով կը պարտաւորվեն անընդամտ կերպով հակելու ուսանողի վրա, որը պարտաւոր է ապրել նոցա մօտ Մովսիսական դաւանութեան պատկանող անձինքը կընդունվեն Պետերբուրգի համալսարանում միմիայն այնքան, որ զոցա թիւը համալսարանը մտնող ուսանողները ընդհանուր թիւի 30/0-ից աւելի չը լինի: Բոլոր ուսանողները, որոնք կընդունվեն Պետերբուրգի համալսարանում ներկայ տարվայ օգոստոսին, կառնուի 25-ական բուրլի, իւրաքանչիւր կիսամակի համար՝ յօգուտ համալսարանի դասախօսութիւնների վարձ, որը տրվում է իբրեւ վարձատրութիւն դասախօսներին, բոլոր ուսանողներին համար նոյն է, ինչ որ առաջ էր: Այս տարվայ օգոստոսից առաջ համալսարան մտնողները՝ պէտք է տան յօգուտ համալսարանի առաջվայ զինք՝ այն է 5 բուրլի: Բերլինի բօրայի յանկարծական թուլանալու պատճառով՝ մօրհակները կուրսը սաստիկ ընկաւ: — Ընդունի վրա՝ 21, Բերլինի վրա՝ 173³/₄, փարիզի վրա՝ 221³/₄, ռուսի 9 ր. 36 կօպ. Փօնդերի վերաբերութեամբ ևս շատ թուլութիւն էր տիրում:

Բերլին, 6 յունիսի: Այսօրվայ բօրայում շատ տեսակ խօսակցութիւններ եղան «С. Петерб. Вѣд.» լրագրի յօդուածի աւելթով, որի մէջ ասված է, որ իբրեւ թէ ուսաց կառավարութեանը առաջարկութիւն է եղել արված՝ ուսաց բոլոր մետաղական փոխառութիւնները թղթադրամի վերածելու վերաբերութեամբ:

Պետերբուրգ, 7 յունիսի: Զինուորական վարչութեան տուած հրամանագրով որոշված է, որ զինեղական շտաբի օբէր-օֆիցերները, որոնք մինչև ակադեմիա մտնելը չեն առաջնորդել վաշտերին և զօրաբաժիններին, պարտաւոր են, նախ քան փոխ-գնդապետի աստիճան ստանալը, մի տարի առաջնորդել մի վաշտի կամ մի զօրաբաժնի, իսկ դրանից յետոյ մինչև զինվորային շտաբի գլխաւոր նշանակվելը կամ առանձին զօրավայրի հրամանատար դառնալը, (գնդապետի աստիճան ստանալուց յետոյ) պէտք է երկրորդ անգամ պաշտօնավարութեան համար ուղարկվեն հետակ զօրքի մէջ 4 ամսով, իսկ հեծելազօրքի մէջ 6 ամսով:

Սիւրիւ, 7 յունիսի: Ատաղայում կենտրոնացած 30,000 ապստամբները պատրաստվում են դիմադրութիւն ցոյց տալու էմիրի զօրքերին. նրանց հետ միացաւ Հերատի ապստամբները մի մասը: Հերատում խառնակութիւնները չարունակվում են: Էմիրը չորս գունդ զօրք կանչեց Բատախանից Կարալի բերդապահ զօրքը զօրացնելու համար:

ՓԱՐԻԶ, 7 յունիսի: Ժողովը ընդունեց մի զօրաբաժնի փորձական սպառազինութեան նախագիծը: Պատերազմական միջոցները յայտնեց, որ կը սպառազինվեն միմիայն 20,000 մարդ և 10,000 ձի:

ԻՆՍՏԻԹՅՈՒՆ, 7 յունիսի: Այստեղ հասաւ վիւհեմ կայսրը. ճանապարհին, Բրեզօվցում, կայսրը տեսակցութիւն ունեցաւ Բավարիայի իշխան-ինամակալի հետ:

ՎԻԵՆԱ, յունիսի 7-ին: Բօլզարական պատգամաւորները փորձեցին համոզել Կօբուրգի պրինցին, որ նա իսկոյն Սօֆիա ուղևորվի: Պրինցը պատասխանեց, որ յոյս ունի վերջնականապէս վճռելու այդ բանը երկու շաբաթից յետոյ:

ՎԱՐՇԱՎԱ, 8 յունիսի: Այստեղի նահանգական դատարանը սկսեց քննել այն 11 հրէաների գործը,

որոնք մեղադրվում են մկրտած հրէուհի Լիւսակովային ուղղափառութիւնից հեռացնելու և ազատութիւնից զրկելու մէջ: Մեղադրվածները թուում գտնվում են և վնասվածի ծնողները:

ԼՕՆԴՈՆ, 8 յունիսի: Արտաքին գործերի միջնորդի օգնականը յայտնեց համայնքների ժողովում, որ Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնները միայն այն ժամանակ կարող են իրանց համաձայնութիւնը կամ անհամաձայնութիւնը յայտնել Կօբուրգի պրինցին Բօլզարիայի իշխան ընտրելու մասին, երբ որ Բ. Դուռը կը վաւերացնի ընտրութիւնը:

ԳԱՇՏԵՑ, 8 յունիսի: Այստեղ ժամանեց վիւհեմ կայսրը:

ՓԱՐԻԶ, 8 յունիսի: Սենատի զինուորական յանձնաժողովը հաւանութիւն տուեց փորձական զինուորականներն օրինադրին, որը և ուղարկված է ֆինանսային յանձնաժողովին:

ՊԱՆԻ, 8 յունիսի: Յիւսու-գերմանական սահմանի վրա Մէջից եկած ճանապարհորդը, նրա իրերը տնտղելու ժամանակ, ատրճանակ կրակեց ֆրանսիական սահմանական կռիւսարի վրա և երկու տեղ վերադարձեց նրան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐԱՍ			
Յունիսի 7-ին			
Իւսաց 1 բուրլ	Ընդունի վրա արժէ	21	պէն.
—	Համբուրգի վրա	177 ⁷ / ₈	պֆ.
—	Փարիզի վրա	221	սան.
Ռսկի	արժէ	9	> 38 կ.
Մարաշի կուպոններ	—	182	> 50
Արժաթ	—	1	> 29
Բօրային դիվիդենդներ	—	45 ⁵ / ₈	> 61 ² / ₁₀
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	100	—	>
—	2-րդ	99	> 37
—	3-րդ	99	> 12
—	4-րդ	99	> 12
—	5-րդ	99	> 25
—	6-րդ	—	>
Արեւելեան 5% փոխառութիւն. 1-ին շրջ.	99	>	—
—	2-րդ	99	>
—	3-րդ	98	> 75
Երբին 5% առաջին փոխառութիւն.	258	>	50
—	երկրորդ	249	>
5 2% ընդհան. —	102	>	—
Ռսկիայ ընդհան. —	192	>	50
Եօթնորդ կօնսօլիդաց. փոխառութիւն.	164	>	50
Նոր երկաթուղային ընդհան. —	99	>	37
5% զբաղական թղթեր կալուած.	168	>	—
—	փոխ. կրեդ. ընդ. —	98	> 62
Գրաւ. թղթ. Ազնու. բանկի —	98	>	62
51 ² / ₁₀ զբաղական թղթեր խեղճանի կալուած. բանկի. —	98	>	75
6% զբաղական. թղթ. խաղաղի կալ. բան. —	103	>	—
—	—	102	> 87
—	—	102	> 37
—	—	102	> 75
—	—	103	>
—	—	102	> 50
—	—	102	> 75
—	—	102	> 37
—	—	27 և 43 տ.	>
—	—	18 և 43 տ.	>
Վօլտա-Կամակի բանկի ակցիաները	694	>	—
Իւսաց երկաթուղիների գլխաւ. ընդ. —	271	>	50
Իրօնիս-Վ. օգօվի ընդ. —	94	>	—
Պետերբուրգի բաղադրային օրիգինալներ.	95	>	75
Մօսկվայի քաղաք. օրիգինալներ.	96	>	12
Սօլթայի —	95	>	25
Քիթիլի քաղաք. կրեդ. ընդ. օրի. —	—	>	—
Նոր փոխառութիւն. —	84	>	—

Ս. Պետերբուրգի բօրայի տրամադրութիւն: Փօնդերի վերաբերմամբ թոյլ է:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԻՆԻՆԻ

ԱՆՆԱ ՄԿՐՏԶԵԱՆ ԲԱԶԵԱՆՅ, ՍԱԼՈՄԷ ԱՍԼԱՆԵԱՆ ԴԱԻԹԵԱՆՅ և ԱՆՆԱ ԱՍԼԱՆԵԱՆ ԻՎՈՅԱՆՅ, ցաւօք սրտի յայտնելով՝ առաջինը իր ամուսնու, իսկ միւս երկուսը իրանց եղբոր՝ ԱՐՄԵՆ ԱՍԼԱՆԵԱՆ ԲԱԶԵԱՆՅԻ մահը, որը տեղի ունեցաւ յուլիսի 5-ին, խնդրում են բարեկամներին և ծանօթներին չորս բերել հանգուցեալի յուզարկաւորութեանը, որը տեղի կունենայ հինգշաբթի, ամսիս 9-ին, առաւօտեան 10 ժամին, վարդանանի տնից, ինժեներայա փողոց, դէպի վանքի մայր եկեղեցին, իսկ այնտեղից դէպի Խօջա-վանքի գերեզմանատունը:

1—1

Hotel Nemecki Edmunda Dziechcinskiego, Warszawa, Ulica Dluga, № 31.
(Нѣмецкая гостиница Эдмунда Дзехчинскаго, въ Варшавѣ, Долгая улица, № 31).
Պ. Էդմունդ Դիչինսկի և ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՐԱՆՈՅՐ, վարչապետ, գտնվում է քաղաքը կենտրոնում, գլխաւոր կառավարական առեւտների, թատրոնների և առևտրական կենտրոնական տեղերի մօտ:
90 սենեակներ, 30 կօպէկից մինչև 3 բուրլի օրական գնով: Բէստօրան և քաղցրեղէններ խանութ: Զաւր 30 կօպէկից մինչև 1 բուրլի: Կառքեր և զինվածաններ դէպի բոլոր երկաթուղիները: Կառքերի վարձը շատ էժան:
Գրադարան և օտար լրագիրների՝ ձրիապէս հիւրերի համար: «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՐԱՆՈՅՐ», որ յաճախված է քաղմաթիւ. հիւրերով թիֆլիսից և նրա շրջակայքից, ստանում է այդ հիւրերի համար հայոց «ՄՇԱԿ» լրագիրը:

(2)

Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры:
1) „Экономическое Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Григорія Арцруни, переводъ съ армянскаго А. Аракелянца. Цѣна 25 коп.
2) Die Oekonomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 kop.
3) Die Hungersnoth in Türkisch-Arménien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amiranjanjanz. Preis 20 kop.
Иногородные, желающіе получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.
Адресъ. Тифлисъ, Редакція „Мшахъ“, или Tiflis, Redaction „Mschakъ“.

(2.)

ԳՐՈՎԻԶՈՐ Ա. ՇՏԻԼԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ԱՍԱՄԵՐԻ ՅԱԻ ԵՒ ՓԶԱՆԱԼԻ ԴԷՄ
ՊՈՐՈՒՆԱՆ ԱՍԱՄԵՐԱԴ ԿԱԹԻՆԵՐ 80 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՎԱՅԻՆԵԱՆ ԱՍԱՄԵՐԻ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՍԱՄԵՐԻ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.
ԳԼԽԱԽՈՐ ՊԱՀԵՍՏ. ԹԻՖԼԻՍԻՄ՝ Կովկասեան դեղաւիճառատան, և պ. պ. Շահպարտեանցի, Մակկերի, Սէնչիկօվսկու և Աքմուրովի դեղատներում. ԲԱԳՈՒԻ մէջ՝ Բէկկերի մօտ, ԳՈՐԹԱՅԻՍԻՄ՝ Կօհօչեկի մօտ, ՍՏԱՎՐՈՊՈԼԻՍ Բրօննօցկու մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻՄ:
(2.)

EXPORTATION-IMPORTATION
CONSTANTIN P. CHÉHIA NTZ
MILAN (ITALIE)
Կոնստանտին Պ. ՇԵՆԱՆՅԻ առևտրական գրասենեակը լինելով ՄԻԼԱՆ, և ունենալով ուղղակի յարաբերութիւններ Իտալիայի, Շվեյցարիայի և Ֆրանսիայի ֆաբրիկաների հետ, կընդունի յանձնարարութեամբ ապրանքներ ծախելու համար հետևեալները՝ մետաքս, բոժոժ, մետաքսի և բոժոժի մնացորդք, բուրդ, բամբակ, ցորենեղէն, նաւթ և ընդհանրապէս Կովկասեան միւս ամեն տեսակ ապրանքները, որոնք ծախվում են Եւրօպայում: Յանձնարարութեամբ կընդունի զարձեալ առեւել Եւրօպայի ամեն տեսակ ապրանքներ Կովկասի համար: Ամբողջ ապրանքները ստանալուց աժան և ձեռնառու պայմաններով փող կը տայ ի հաշիւ մանրամասն տեղեկութեանց համար գրել այս հասցեով. Monsieur Constantin P. Chéhiantz, № 18, Via Lauro, Milan, (Italie) MİLAN (Italiya).

ԷԼԻԿՍԻՐ ԱՏԱՄԵՐԻ ՀԱՄԱՐ (ELIXIR DENTIFRICE)
ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ՀԱՅՐԵՐԻ
ՍՈՒԼԻԱԿԻ ԱՐԲԱՅՈՒԹԻՆԵՑ (GIRONDE)

Առաջինը համար Բենեդիկտեան հայրերից պատրաստած էլիկսիր ամենօրեայ գործածութիւնը, մի քանի կաթիլներ ջրի մի կէս բաժակի մէջ, պահպանում է առաջինը փչանալուց, սպիտակ է դարձնում և պնդացնում է առամենքը, մաքրում է և պահպանում է ծնօտը:
Գինը զօրակը 2 և 8 ֆրանկ. ֆօշին՝ արկղիկը 1 ֆրանկ 25 սանտ. Պատա՛ արկղիկը 2 ֆրանկ:
Հիմնադրութիւնը դոյուքին ունի 1804 թիւից.
Գլխաւոր ագէնտ SEGUIN, Բօրդօ (Ֆրանսիա).
ԹԻՖԼԻՍԻՄ ծախվում է պ. Բերլինցի մազաղինում և պարֆիւմէրների ուրիշ մազաղիններում: ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍՈՒՄ. Է. Ա. Էնկէնի և Գ. Ա. Օտիւիլի մօտ:
40—48

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր
ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵՋՈՒՈՎ
„ԶԻՆՈՒՈՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ“
Կ Ո Վ Կ Ա Ս Ի Հ Ա Մ Ա Ր
Գինն է 30 կօպէկի
վաճառվում է «Մշակի» խմբագրատանը, նոյնպէս և կենտրոնական դրամատանցում:
1—10
ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԱՆԶԷ Է ԱՌՆՈՒՄ ՊԱՏՐԱՍՏԵԼ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ զինազինների համար՝ մինչև վեցերորդ դասատան դասընթացը. — իսկ մաթեմատիկական առարկաներից ամեն տեսակ դպրոցների բոլոր դասարաններին համար: Ցանկացողները իրանց հասցէն կարող են թողնել «Մշակի» խմբագրատանը:
6—6
Дозволено цензурою, Тифлисъ 8 Іюля 1887 г. Типографія Канцеляріи Главнотач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская ул. д. наз.